ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

2018
հունվար-հունիս

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՀԱՄԱԽԱՌՆ ՆԵՐՔԻՆ ԱՐԴՅՈՒՆՔ 3
2. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇ 3
3. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ 7
3.1 ՄՇԱԿՈՂ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ 11
4. ԱՌԵՎՏՐԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆ 13
5. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ 14
6. ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ 15
7. ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ 21
8. ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ 22

1. ՀԱՄԱԽԱՌՆ ՆԵՐՔԻՆ ԱՐԴՅՈՒՆՔ

ՀՆԱ արտադրություն

Գրանցվել է համախառն ներքին արդյունքի աճի արագացում: ՀՆԱ կառուցվածքում էական փոփոխություններ տեղի չեն ունեցել, որի պայմաններում նախորդ տարվա առաջին կիսամյակի համեմատ ավելացել են արդյունաբերության, շինարարության, գյուղատնտեսության և ծառայությունների ՀՆԱ աճին նպաստման ցուցանիշի մեծությունները:

ՀՆԱ աճին առավելագույն նպաստում են ունեցել «մեծածախ և մանրածախ առևտուր. ավտոմեքենաների և մոտոցիկլների նորոգում», «մշակող արդյունաբերություն», «մշակույթ, զվարճություններ և հանգիստ» և «արտադրանքի հարկեր (հանած սուբսիդիաներ)» գործունեության տեսակները:

Եթե 2014-2016 թվականների առաջին կիսամյակներում ՀՆԱ աճին արդյունաբերության հիմնական ճյուղերից առավելագույն նպաստում ուներ հանքագործական արդյունաբերությունը, ապա 2017-2018 թվականներին առավելագույն նպաստում ապահովել է մշակող արդյունաբերությունը:

2018 թվականի առաջին կիսամյակում ՀՆԱ կազմել է 2470.9 մլրդ դրամ, աճը՝ 8.3%: Արդյունաբերության ավելացված արժեքի աճը կազմել է 6.8% (նպաստումը՝ 1.4 տոկոսային կետ), առևտուր և ծառայություններինը՝ 9.5% (նպաստումը՝ 5.3 տոկոսային կետ), գյուղատնտեսությանը՝ 5.8% (նպաստումը՝ 0.5 տոկոսային կետ), իսկ շինարարությանը՝ 8.9% (նպաստումը՝ 0.5 տոկոսային կետ): Զուտ հարկերի աճը կազմել է 8.7% (նպաստումը՝ 1.0 տոկոսային կետ):



Հաշվետու ժամանակահատվածում 2017 թվականի 1-ին կիսամյակի ցուցանիշների համեմատ, ՀՆԱ գրեթե անփոփոխ կառուցվածքի պայմաններում, արդյունաբերության նպաստման չափն ավելացել է 0.6, գյուղատնտեսությանը 1.0, շինարարությանը 1.3 և շառայություններինը 1.1 տոկոսային կետով:

Ի տարբերություն նախորդ երկու տարիների նվազումներին 2018 թվականի առաջին կիսամյակում արձանագրվել է շինարարության և սպասարկման այլ ծառայությունների ավելացված արժեքի աճ, համապատասխանաբար՝ 8.9% և 43.2%: «Պետական կառավարում և պաշտպանություն.պարտադիր սոցիալական ապահովագրություն» և «կրթություն» ոլորտներում, ինչպես և նախորդ տարի գրանցվել է նվազում. 2018 թվականի հունվար-հունիսին այն կազմել է համապատասխանաբար՝ -11.1% և -0.7%:

Ըստ ՏԳՏՀԴ 2-նիշ դասակարգման բացվածքի՝ ՀՆԱ աճին առավելագույն նպաստում են ունեցել հետևյալ ճյուղերը. «մեծածախ և մանրածախ առևտուր. ավտոմեքենաների և մոտոցիկլների նորոգում»՝ 1.2, «մշակող արդյունաբերություն»՝ 1.1, «մշակույթ, զվարճություններ և հանգիստ»՝ 1.0 և «արտադրանքի հարկեր (հանած սուբսիդիաներ)»՝ 1.0 տոկոսային կետ (գումարային 5.3 տոկոսային կետ): Մյուս 17 գործունեության տեսակների գումարային դրական նպաստումը կազմել է 3.9 տոկոսային կետ: Բացասական նպաստում են ունեցել հետևյալ երեք ճյուղերը. «պետական կառավարում և պաշտպանություն.պարտադիր սոցիալական

ապահովագրություն»՝ -0.5, «ֆինանսական միջնորդության անուղղակի չափվող ծառայություններ (ՖՄԱՉԾ)»՝ -0.2 և «ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում»՝ -0.1 տոկոսային կետ (գումարային՝ -0.8 տոկոսային կետ):



Արդյունաբերության ոլորտում, ի հակադրություն 2016 թվականի և 2017 թվականի առաջին երկու եռամսյակների ընթացքում աճի տեմպերի դանդաղմանը, 2018 թվականին թե եռամսյակային և թե կիսամյակային կտրվածքով հաջորդել է վերջիններիս արագացում:





ՀՆԱ աճին մշակող արդյունաբերության նպաստումը կազմել է 1.1 տոկոսային կետ (2017թ.՝ 0.6 տոկոսային կետ), իսկ հանքագործական արդյունաբերության նպաստումը 0.3 տոկոսային կետ (2017թ.՝ 0.3 տոկոսային կետ):

Էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարման գծով գրանցվել է 3.5% աճ, իսկ ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակման գծով նվազումը կազմել է 14.0%:

Առևտրի ավելացված արժեքի աճը կազմել է 10.7%, որին առավելապես նպաստել է մեծածախ առևտրի շրջանառության 17.8% աճը:





Ծառայությունների 9.3% աճն ապահովել է ՀՆԱ կառուցվածքում վերջինիս մասնաբաժնի ավելացում 0.2 տոկոսային կետով: Ծառայությունների ավելացված արժեքում առավել մեծ տեսակարար կշիռ ունեցող՝ «անշարժ գույքի հետ կապված գործունեություն», «ֆինանսական և ապահովագրական գործունեություն», «մշակույթ, զվարճություններ և հանգիստ» ծառայության տեսակներում գրանցվել է համապատասխանաբար՝ 3.2%; 14.0% և 18.9% աճ: Ավելացված արժեքի նվազում է գրանցվել հետևյալ ծառայությունների տեսակներում՝ «պետական կառավարում և պաշտպանություն», «պարտադիր սոցիալական ապահովագրություն»՝ -11.1%, «կրթություն»՝ -0.7%:





Ի տարբերության 2017 թվականի առաջին կիսամյակի գյուղատնտեսության ավելացված արժեքի նվազման, հաշվետու ժամանակահատվածում արձանագրվել է 5.8% աճ, որի շնորհիվ ՀՆԱ կառուցվածքում վերջինիս մասնաբաժինն ավելացել է 1.1 տոկոսային կետով:

2016 և 2017 թվականների 1-ին կիսամյակի -7.8% և -11.6% նվազումների դիմաց 2018 թվականի առաջին կիսամյակում արձանագրվել է շինարարության 8.9% աճ:

ՀՆԱ օգտագործում

2018 թվականի առաջին կիսամյակում, ինչպես և նախորդ տարի, աճ է գրանցել ՀՆԱ հիմնական ծախսային բոլոր բաղադրիչների գծով: Վերջնական սպառման ծախսերը չեն գերազանցում ՀՆԱ մակարդակը: Էականորեն աճել է համախառն կուտակումը:

Վերջնական սպառման ծախսերի աճին նպաստել են տնային տնտեսությունների 4.4%, տնային տնտեսություններին սպասարկող ոչ առևտրային կազմակերպությունների 2.0% աճերը: Պետական հիմնարկների վերջնական սպառման ծախսերը նվազել են 9.1%-ով՝ հիմնականում ի հաշիվ կոլեկտիվ պահանջմունքները բավարարող պետական հիմնարկների ծախսերի 13.7% նվազման:

ՀՆԱ կառուցվածքն ըստ օգտագործման, %



	2016 S1		2017 S1		2018 S1	
	մլրդ դրամ	աճ, %	մլրդ դրամ	աճ, %	մլրդ դրամ	աճ, %
ՀՆԱ	**2025.9**	**3.3**	**2187.0**	**6.9**	**2470.9**	**8.3**
Վերջնական սպառման ծախսեր	**1973.1**	**-2.3**	**2153.9**	**9.0**	**2254.0**	**2.2**
Համախառն կուտակում	**283.9**	**-4.7**	**292.7**	**3.4**	**528.9**	**76.4**
Ապրանքների և ծառայությունների արտահանման և ներմուծման սալդո	**-178.6**	**x**	**-217.8**	**x**	**-365.2**	**x**
Արտահանում	**732.7**	**19.2**	**872.8**	**17.6**	**1028.6**	**9.8**
Ներմուծում	**911.4**	**2.0**	**1090.5**	**18.6**	**1393.7**	**21.2**
Վիճակագրական շեղում	**-52.5**	**x**	**-41.8**	**x**	**53.1**	**x**

Համախառն կուտակման աճը կազմել է 76.4%, իսկ մասնաբաժինն ավելացել է 8.0 տոկոսային կետով: Ընդ որում, նյութական շրջանառու միջոցների պաշարների ծավալը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ աճել է շուրջ 11.6 անգամ, որի արդյունքում ՀՆԱ կառուցվածքում մասնաբաժինն ավելացել է 7.7 տոկոսային կետով՝ կազմելով 8.5%՝ 2017 թվականի նույն ժամանակաշրջանի 0.8%-ի դիմաց:

Եթե 2016 և 2017 թվականներին վերջնական սպառման ծախսերը ՀՆԱ մեջ կազմել են 97.4% և 98.5% համապատասխանաբար, ապա 2018 թվականի առաջին կիսամյակի ցուցանիշը կազմել է 91.2%: Արտահանման և ներմուծման բացասական հաշվեկշռի մասնաբաժինը ավելացել է 4.8 տոկոսային կետով:

1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇ

Նախորդ երկու տարիների 1-ին կիսամյակների համեմատությամբ բարձրացել է տնտեսական ակտիվության մակարդակը թե՛ ամսական, թե՛ աճողական կտրվածքով: 2016-2017 թվականների 1-ին կիսամյակում գրանցված նվազումների դիմաց շինարարության ոլորտում գրանցվել է երկնիշ աճ: Ծառայությունների աճի տեմպն արագացել է, իսկ արդյունաբերությանը՝ դանդաղել:

Տնտեսական ակտիվության ցուցանիշը կազմել է 8.9%՝ 2016 և 2017 թվականների առաջին կիսամյակի 5.3% և 6.3%-ի դիմաց: Ընդհանուր առմամբ, 2018 թվականի տնտեսական ակտիվության ամսական աճողական ցուցանիշի աճի տեմպերը էականորեն արագացել են նախորդ տարվա համապատասխան ցուցանիշների նկատմամբ:





Ի տարբերություն 2016 և 2017 թվականների առաջին կիսամյակների -7.8% և -9.2% նվազումների, 2018 թվականի տարեսկզբից շինարարության ոլորտում գրանցվել է 13.6% աճ: Արագացել է ծառայությունների աճը՝ կազմելով 18.1%, որը համապատասխանաբար 7.2 և 9.6 տոկոսային կետով ավել է 2017 և 2016 թվականների ցուցանիշից: Արդյունաբերության ոլոտում հակառակ պատկերն է. ի տարբերություն նախորդ երկու տարիների առաջին կիսամյակներում գրանցված բարձր աճի՝ 2018 թվականին աճի տեմպերը դանդաղել են՝ կազմելով 3.8%:



Նախորդ տարիներին արձանագրված ցածր աճի կամ նվազումների դիմաց գյուղատնտեսության ոլորտում թե ամսական և թե աճողական կտրվածքով արձանագրվել է աճ: 2018 թվականի առաջին կիսամյակում գյուղատնտեսության արտադրանքի ծավալը կազմել է 260.7 մլրդ դրամ, աճը՝ 8.7%:



Բուսաբուծության աճը կազմել է 21.1%, ձկնորսությանը՝ 0.5%, իսկ անասնաբուծությունում գրանցվել է 3.6% նվազում:

Ի տարբերություն նախորդ երկու տարիների նվազումների 2018 թվականին տարեսկզբից շինարարության ոլորտում արձանագրվել են երկնիշ աճեր՝ կիսամյակում ապահովելով 13.6% աճ: Աճին դրական են նպաստել (ըստ շինարարության ծավալների ֆինանսավորման աղբյուրների կառուցվածում տեսակարար կշռի նվազման) «կազմակերպությունների միջոցների հաշվին» իրականացված շինարարությունը՝ 6.5, բնակչության միջոցների հաշվին՝ 1.5, պետական բյուջեի հաշվին՝ 2.4 և միջազգային վարկերի հաշվին՝ 6.7 տոկոսային կետով: Իսկ մարդասիրական օգնության միջոցների և համայնքների միջոցների ֆինանսավորմամբ շինարարության ծավալները, որոնք ըստ ֆինանսավորման աղբյուրների շինարարության կառուցվածում գումարային կազմել են 2.6%, համապատասխանաբար՝ -0.1 և 0.5 զսպել են շինարարության աճը:





2. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

2016 և 2017 թվականների համեմատությամբ արդյունաբերական արտադրանքի ծավալի աճը աճողական կտրվածքով էականորեն դանդաղել է: Հիմնական ճյուղերից մշակող արդյունաբերությունում, էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում ճյուղում գրանցվել է աճ, իսկ հանքագործական արդյունաբերությունում նվազում: Մշակող արդյունաբերության աճի տեմպն աճողական կտրվածքով նվազման միտում ունի: Արդյունաբերական արտադրանքի ծավալի աճին զուգընթաց, ավելացել են նաև ոլորտում ՀՀ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին տրամադրված ընդհանուր վարկերը, այդ թվում՝ արտարժույթով:

2018 թվականի առաջին կիսամյակում արդյունաբերական արտադրանքի թողարկման ծավալը կազմել է 805.0 մլրդ դրամ, աճը՝ 3.7%: Հանքարդյունաբերությունը նվազել է 9.8%-ով, իսկ մշակող արդյունաբերության ճյուղում արձանագրվել է 8.6% աճ, որը 8.9 տոկոսային կետով ցածր է նախորդ տարվա համանման ցուցանիշից:

Արդյունաբերության հիմնական բաժինների ցուցանիշները

	2016 S1			2017 S1			2018 S1		
	Աճ , %	Կառուց-վածք, %	Աճին նպաստում, տ/կ	Աճ , %	Կառուց-վածք, %	Աճին նպաստում, տ/կ	Աճ , %	Կառուց-վածք, %	Աճին նպաստում, տ/կ
Արդյունաբերություն	8.9	100.0	-	12.4	100.0	-	3.7	100.0	-
Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում	18.8	18.5	3.4	8.9	20.5	1.6	-9.8	19.6	-2.0
Մշակող արդյունաբերություն	5.1	59.8	3.1	17.5	60.9	10.5	8.6	63.1	5.2
Էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում	11.4	20.1	2.2	0.5	17.1	0.1	3.3	15.7	0.6
Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում	8.2	1.6	0.1	9.0	1.6	0.1	-1.6	1.5	0.0

Արդյունաբերության աճին (ինչպես և նախորդ տարի) առավելապես նպաստել է մշակող արդյունաբերությունը՝ 5.2 տոկոսային կետով, իսկ հանքարդյունաբերությունը զսպել է աճը -2.0 տոկոսային կետով:

Արդյունաբերության կառուցվածքում փոփոխությունների բացահայտման համար կիրառվել է Ռյաբցևի կառուցվածքային տեղաշարժերի գործակիցը (I_R), որի արժեքները տատանվում են 0-1 միջակայքում: Գործակցի 0 արժեքը վկայում է, որ կառուցվածքում փոփոխություններ բացարձակ տեղի չեն ունեցել, իսկ 1՝ առկա է կառուցվածքի ամբողջական հակադրություն: Ստորև բերված գծապատկերում ներկայացված է 2018 թվականի 1-ին կիսամյակի և նախորդ տարիների 1-ին կիսամյակների համեմատականը: 2018 թվականին 2017 թվականի համեմատ արդյունաբերության կառուցվածքում էական փոփոխություններ տեղի չեն ունեցել. կառուցվածքային տեղաշարժերի քառակուսային գործակիցը կազմել է 0.020 (գործակիցը գտնվում է 0.000-0.030՝ կառուցվածքի նույնականության միջակայքում): 2018 թվականին ամենամեծ կառուցվածքային տեղաշարժը եղել է 2009 թվականի կառուցվածքի համեմատ: Գործակիցը կազմել է

0.083 (գործակիցը գտնվում է 0.071-0.150՝ տեղաշարժերի ցածր փոփոխությունների միջակայքում): Դա պայմանավորված է հանքարդյունաբերության տեսակարար կշռի աճով և էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու, լավորակ օդի մատակարարում ենթաճյուղի տեսակարար կշռի նվազմամբ:



Ռյաբցևի կառուցվածքային տեղաշարժերի քառակուսային գործակցի գնահատման սանդղակը	
IR արժեքի միջակայքերը	Կառուցվածքային տեղաշարժերի բնութագիրը
0.000-0.030	Կառուցվածքների նույնականություն
0.031-0.070	Կառուցվածքային տեղաշարժերի անէական մակարդակ
0.071-0.150	Կառուցվածքային տեղաշարժերի ցածր մակարդակ
0.151-0.300	Կառուցվածքային տեղաշարժերի զգալի մակարդակ
0.301-0.500	Կառուցվածքային տեղաշարժերի էական մակարդակ
0.501-0.700	Կառուցվածքային տեղաշարժերի բավականին էական մակարդակ
0.701-0.900	Կառուցվածքների հակադարձ տեսակ
0.901 -1.000	Կառուցվածքների ամբողջական հակադրություն

Արդյունաբերական արտադրանքի արտահանման ցուցանիշի անվանական ծավալների աճը 2016-2018 թվականների հունվար-հունիս ժամանակաշրջանում առաջանցիկ է իրացման աճի նկատմամբ, արդյունքում՝ 2016թ. նույն ժամանակաշրջանի համեմատ 2018թ. արտահանում/իրացում ցուցանիշն ավելացել է 5.5 տոկոսային կետով: Ավելացումը բնութագրական է արդյունաբերության բոլոր ճյուղերի համար:





2018 թվականի հունիսի վերջի դրությամբ ՀՀ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին տրամադրված ընդհանուր վարկերն արդյունաբերության ոլորտում կազմել են 542.2 մլրդ ՀՀ դրամ, որից՝ 450.0 մլրդ ՀՀ դրամին համարժեք արտարժույթով տրամադրված վարկերն են, իսկ 92.2 մլրդ ՀՀ դրամ՝ հայկական արժույթով տրամադրվածները: Ընդ որում, նախորդ տարիների համեմատ էականորեն ավելացել է ՀՀ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին տրամադրված արտարժույթով վարկերի ծավալը: ՀՀ առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից արտարժույթով տրամադրված վարկերը հունվար-հունիսին հիմնականում ուղղվել են էլեկտրականության, գազի գոլորշու և լավորակ օդի մատակարարման և մշակող արդյունաբերության ոլորտներին: 2000-2017 թվականների արդյունաբերության ոլորտի հիմնական միջոցների և ոլորտին տրամադրվող վարկերի փոխկապվածության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ կորելացիայի գործակիցը 0.906 է (արդյունաբերության ավելացված արժեքի հետ՝ 0.912), ինչը փաստում է, որ վերոնշյալ երկու ցուցանիշների միջև առկա է ուղիղ համեմատական սերտ կապ, որն էլ թույլ է տալիս ենթադրել, որ վարկային միջոցները հիմնականում ուղղվում են հիմնական միջոցների ձեռքբերմանը:

3.1 ՄՇԱԿՈՂ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Մշակող արդյունաբերության աճի տեմպն աճողական կտրվածքով նվազման միտում ունի: Ի հակադրումն դրա՝ ավելացել է մշակող արդյունաբերության արտադրանքի արտահանման ծավալը: Աճ է գրանցվել մշակող արդյունաբերության բոլոր ենթաճյուղերում, բացառությամբ հիմնային մետաղների արտադրության: Շարունակվում է նաև մշակող արդյունաբերությունում առավել ցածր տեսակարար կշիռ ունեցող ենթաճյուղերի աճի միտումը:

Մշակող արդյունաբերության թողարկումը 2018 թվականի հունվար-հունիսին աճել է 8.6%-ով՝ նախորդ տարվա 17.5%-ի փոխարեն: Արտահանվել է մշակող արդյունաբերության արտադրանքի 45.3%-ը՝ 2016 թվականի նույն ժամանակաշրջանի 47.2%-ի դիմաց: Կառուցվածքում շարունակում են գերակշռել 4 ենթաճյուղեր, որոնք կազմել են մշակող արդյունաբերության 73.2%-ը (արդյունաբերության մեջ՝ 46.2%):

Մշակող արդյունաբերության կառուցվածքը, %



2018 թվականի առաջին կիսամյակում մշակող արդյունաբերության կառուցվածքում թեպետ նվազել է «արտադրատեսակների արտադրություն, չներառված ուրիշ խմբավորումներում» ճյուղի մասնաբաժինը 1.9 տոկոսային կետով, սակայն այն 3.1% մասնաբաժնով կազմում է 5-րդ խոշոր խումբը: Աճ է արձանագրվել մշակող արդյունաբերության բոլոր ճյուղերում, բացառությամբ՝ «հիմնային մետաղների արտադրություն» ենթաճյուղի, որը նվազել է 3.4%-ով:

Մշակող արդյունաբերության արտադրանքի արտահանման անվանական ծավալները շարունակում են աճել՝ նախորդ տարվա բարձր բազայի պայմաններում: Չնայած դրան՝ արտահանում/իրացում հարաբերակցությունը կազմել է 45.3% 2016 թվականի՝ 43.1 և 2017 թվականի 47.2%-ի դիմաց:

Մշակող արդյունաբերության կառուցվածքում առավել բարձր տեսակարար կշիռ ունեցող ենթաճյուղերի ցուցանիշներ

	2016 S1			2017 S1			2018 S1		
	Իրացում, մլրդ դրամ	Արտահանում, մլրդ դրամ	Արտահանում իրացման նկատմամբ, %	Իրացում, մլրդ դրամ	Արտահանում, մլրդ դրամ	Արտահանում իրացման նկատմամբ, %	Իրացում, մլրդ դրամ	Արտահանում, մլրդ դրամ	Արտահանում իրացման նկատմամբ, %
Մշակող արդյունաբերություն	396.2	170.9	43.1	454.2	214.3	47.2	513.4	232.3	45.3
Սննդամթերքի արտադրություն	134.3	8.9	6.6	133.5	9.6	7.2	148.0	14.2	9.6
Խմիչքների արտադրություն	48.1	30.0	62.3	63.0	42.3	67.1	64.1	37.7	58.8
Ծխախոտ.արտադրատես. արտադրություն	56.9	41.4	72.8	65.5	51.2	78.2	73.9	57.3	77.6
Այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրություն	14.8	6.5	43.6	16.3	2.3	14.3	23.0	3.1	13.5
Հիմնային մետաղների արտադրություն	73.8	59.9	81.1	91.7	76.1	83.0	94.4	77.8	82.4
Արտադրատեսակների արտադրություն, չներառված ուրիշ խմբավորումներում	17.5	16.0	91.0	23.9	22.8	95.5	27.8	25.1	90.2

«Խմիչքների արտադրություն» ճյուղի արտահանման անվանական ծավալը նվազել է 4,6 մլրդ դրամով, իսկ արտահանում/իրացման նկատմամբ հարաբերակցությունը հաշվետու ժամանակաշրջանում՝ 8.3 տոկոսային կետով՝ թողարկման և իրացման աճի պայմաններում (աճել է ներքին շուկայում իրացման ծավալը):

Մշակող արդյունաբերության խոշոր 6 ճյուղերից երկուսում՝ «Սննդամթերքի արտադրություն» և «Հիմնային մետաղների արտադրություն», իրացման նպատակով օգտագործվել է նաև համապատասխանաբար՝ 3.7 և 8.2 մլրդ դրամի պաշար:

Մշակող արդյունաբերության ցուցանիշները, 2018թ. հունվար-հունիս

		Արտադրանքի ծավալ, մլրդ դրամ	Աճ 2017թ. նույն ժ/շ նկատմամբ, %	Կառուցվածք, %	Արդյունաբե-ության աճին նպաստման չափ, %	Արտահանումն իրացման նկատմամբ %
C	Մշակող արդյունաբերություն	508.0	8.6	63.1	5.2	45.3
10	Սննդամթերքի արտադրություն	144.3	0.0	17.9	0.0	9.6
11	Խմիչքների արտադրություն	65.6	4.8	8.1	0.4	58.8
12	Ծխախոտային արտադրատեսակների արտադր.	75.8	5.7	9.4	0.5	77.6
13	Մանածագործական արտադր արտադր.	0.4	41.4	0.0	0.0	1.5
14	Հագուստի արտադրություն	9.7	81.9	1.2	0.6	77.6
15	Կաշվի, կաշվե արտադրատես. արտադր.	0.8	12.7	0.1	0.0	141.3
16	Փայտանյութի մշակում, բացի կահույքից	0.5	24.3	0.1	0.0	166.0
17	Թղթի և թղթե արտադր. արտադրություն	14.0	28.4	1.7	0.4	0.2
18	Պոլիգրաֆ. գործ., գրառված կրիչների բազմացում	9.2	53.3	1.1	0.4	1.0
20	Քիմիական նյութերի և քիմիական արտադրատես. արտադրություն	6.4	34.0	0.8	0.2	8.2
21	Դեղագործական արտադր արտադրություն	4.7	4.0	0.6	0.0	55.7
22	Ռետինե և պլաստմասսայե արտադրատես. արտ.	15.5	22.2	1.9	0.4	9.3
23	Այլ ոչ մետաղական հանքային արտադրատես. արտ.	24.6	41.4	3.1	1.0	13.5
24	Հիմնային մետաղների արտադրություն	86.2	-3.4	10.7	-0.4	82.4
25	Պատրաստի մետաղական արտադրատես. արտ.	5.9	20.1	0.7	0.1	7.6
26	Համակարգիչների, էլեկտրոնային և օպտիկական սարքավորումների արտադրություն	4.6	45.6	0.6	0.2	66.2
27	Էլեկտրական սարքավորանքի արտադրություն	5.2	3.5	0.6	0.0	10.7
28	Մեքենաների և սարքավորանքի արտադր. չներառված ուրիշ խմբավորումներում	1.7	86.5	0.2	0.1	40.5
30	Այլ տրանսպորտային սարքավորանքի արտ.	0.1	1204.0	0.0	0.0	100.0
31	Կահույքի արտադրություն	2.0	29.0	0.2	0.1	5.5
32	Արտադրատեսակների արտադրություն, չներառված ուրիշ խմբավորումներում	27.7	31.1	3.4	0.9	90.2
33	Մեքենաների և սարքավորանքի նորոգում և տեղադրում	3.0	94.6	0.4	0.2	5.3

4. ԱՌԵՎՏՐԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆ

Բացառությամբ ավտոմեքենաների առևտրի շրջանառության, առևտրի շրջանառության մյուս ենթաճյուղերում 2018 թվականի հունվար-հունիսին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշների համեմատությամբ աճի դանդաղում է գրանցվել:

Առևտրի շրջանառության աճը կազմել է 9.1%: Կառուցվածքում առավելագույն կշիռ ունեցող մանրածախ առևտրի շրջանառության աճը կազմել է 0.5%՝ 2017 թվականի հունվար-հունիսի համեմատ նվազելով 5.7 տոկոսային կետով: Բացառությամբ խանութների միջոցով իրականացվող մանրածախ առևտրի 1.3% աճի, առևտրի մյուս օբյեկտների միջոցով իրականացվող մանրածախ առևտրի ծավալների նվազում է գրանցվել:



Մասնավորապես. գյուղատնտեսական արտադրանքի շուկաների միջոցով իրականացված մանրածախ առևտրի ծավալը նվազել է 12.5%, կրպակների միջոցով՝ 5.5%, սպառողական շուկաների միջոցով՝ 0.9%, իսկ այլ օբյեկտների միջոցով՝ 0.7%-ով:

Գյուղատնտեսական արտադրանքի շուկաների միջոցով իրականացված մանրածախ առևտրի նվազումը պայմանավորված է Երևան քաղաքի՝ -2.4%, Տավուշի մարզի՝ -37.4%, Արմավիրի մարզի՝ -14.1% նվազումներով: Տեսակարար կշիռները կազմել են համապատասխանաբար՝ 39.3, 22.0 և 6.8%, գումարային բացասական նպաստումը՝ -13.4 տոկոսային կետ:

Սպառողական ապրանքների շուկաների միջոցով իրականացվող մանրածախ առևտրի ծավալների նվազում է գրանցվել Արմավիրի, Գեղարքունիքի, Լոռու, Կոտայքի, Սյունիքի և Տավուշի մարզերում: Ընդհանուր տեսակարար կշիռը կազմել է 31.0%, բացասական նպաստումը՝ 17.6 տոկոսային կետ: Առավելագույն դրական նպաստում ունեցել է Երևան քաղաքը՝ 16.2 տոկոսային կետ:

Ի հակադրություն վերոնշյալի Երևան քաղաքի բոլոր մարզերում խանութների միջոցով իրականացվող մանրածախ առևտրի աճ է գրանցվել:

5. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Շարունակվում է ծառայությունների ոլորտի աճի տեմպի արագացումը: Բացառությամբ կրթության, մյուս ծառայության տեսակների գծով գրանցվել է աճ: Ինչպես 2017 թվականի հունվար-հունիսին, այնպես էլ հաշվետու ժամանակաշրջանում առավելագույն տեսակարար կշիռ ունեն ֆինանսական և ապահովագրական գործունեություն և մշակույթ, զվարճություններ և հանգիստ ծառայության տեսակները, որոնք 2010թ. հունվար-հունիսի համեմատ ապահովել են ամենաբարձր աճերը:

Հաշվետու ժամանակաշրջանում ծառայությունների ծավալը կազմել է 151.1 մլրդ դրամ, աճը՝ 18.1%, որը 7.2 տոկոսային կետով գերազանցել է 2017 թվականի հունվար-հունիսի ցուցանիշը:





Կառուցվածքում առավելագույն տեսակարար կշիռ ունեցող «ֆինանսական և ապահովագրական գործունեություն» տեսակի աճը կազմել է 18.2%, որի 12.3 տոկոսային կետն ապահովել է «բանկերի գործունեություն» ենթատեսակը (աճը՝ 13.9%):

«Մշակույթ, զվարճություններ և հանգիստ» ծառայության տեսակի աճը կազմել է 33.0%, որի 32.5 տոկոսային կետն ապահովել է «շահումով խաղերի կազմակերպման հետ կապված գործունեություն

Ծառայությունների կառուցվածքն ըստ տեսակների, %

	2015 S1	2016 S1	2017 S1	2018 S1
ֆինանսական և ապահովագրական գործունեություն	24.7	20.3	22.0	22.0
մշակույթ, զվարճություններ և հանգիստ	13.5	19.3	18.9	21.0
տեղեկատվություն և կապ	19.2	17.7	16.8	15.1
տրանսպորտ	12.0	13.1	13.4	12.8
կացություն և հանրային սննդի կազմակերպում	6.7	6.3	6.6	7.0
մասնագիտական, գիտական և տեխնիկական գործունեություն	5.2	5.0	4.5	4.5
վարչարարական և օժանդակ գործունեություն	4.7	4.5	4.3	4.5
Կրթություն	4.1	4.3	4.0	3.3
առողջապ և բնակչության սոցիալական սպասարկում	3.9	3.8	3.9	4.2
անշարժ գույքի հետ կապված գործուն	3.9	3.6	3.6	3.6
սպասարկման այլ ծառայություններ	2.1	2.1	2.0	1.9

ենթատեսակը»:

«Տեղեկատվություն և կապ» ծառայության տեսակի աճը կազմել է 7.3%, որի 6.0 տոկոսային կետն ապահովել է «Ծրագրային ապահովման մշակում և հարակից գործողություններ» ենթատեսակը:

«Կրթություն» ծառայության տեսակի ծավալը նվազել է 2.4%-ով, որին 1.5 տոկոսային կետով բացասական նպաստում է ունեցել «Նախադպրոցական և տարրական կրթություն» ենթատեսակը: «Կրթություն» ծառայության տեսակում առավելագույն տեսակարար կշիռ (67.9%) ունեցող «Բարձրագույն և հետբուհական կրթություն» ենթատեսակի ծավալը 2017 թվականի հունվար-հունիսի համեմատ մնացել է նույնը:

Ընդ որում «Կրթություն» ծառայությունը միակն է, որը 2010 թվականի հունվար-հունիսի համեմատ գրանցել է 7.7% նվազում: 2010 թվականի հունվար-հունիսի համեմատ առավելագույն 9.3 անգամ աճ է գրանցվել



«Մշակույթ, զվարճություններ և հանգիստ», 5.2 անգամ՝ «Ֆինանսական և ապահովագրական գործունեություն» տեսակներում:

6. ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ

ՀՀ արտաքին առևտրաշրջանառության, արտահանման և ներմուծման աճերը երկնիշ են և առավել բարձր են նախորդ տարվա համապատասխան ցուցանիշների համեմատ: 2018 թվականին դեպի ԵՄ երկրներ արտահանման աճի տեմպերի՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ արագացմանը զուգահեռ, դանդաղել են դեպի ԱՊՀ երկրներ արտահանման աճի տեմպերը: Արտահանման կառուցվածքում փոքր մասնաբաժին ունեցող ճյուղերի արտադրանքի արտահանումները ևս սկսել են աճել:

2018 թվականի առաջին կիսամյակում ՀՀ արտաքին առևտրաշրջանառությունը կազմել է 3476.1 մլն ԱՄՆ դոլար՝ աճը նախորդ տարվա համապատասխան ցուցանիշի նկատմամբ՝ 28.9%: Արտահանումը կազմել է 1165.2 մլն ԱՄՆ դոլար՝ աճը 20.0%, իսկ ներմուծումը՝ 2310.9 մլն ԱՄՆ դոլար, աճը՝ 33.9%:

2018 թվականի հունվար-հունիսին աճել է ՀՀ արտաքին առևտրաշրջանառությունը բոլոր երկրների խմբերի գծով. մասնավորապես՝ ԱՊՀ երկրների հետ առևտրաշրջանառության աճը կազմել է 23.7%, ԵՄ երկրների հետ՝ 40.4%, ԱՅԼ երկրների հետ՝ 26.3%:





Աճ է արձանագրվել նաև ԵՏՄ անդամ պետությունների հետ առևտրաշրջանառության գծով. Ռուսաստանի Դաշնության հետ առևտրաշրջանառության աճը կազմել է 19.9%, Բելառուսինը՝ 24.0%, իսկ Ղազախստանինը՝ 2.5 անգամ: ՀՀ արտաքին առևտրաշրջանառության կառուցվածքում նախորդ տարվա համեմատությամբ ավելացել է «ԵՄ երկրներ» խմբի մասնաբաժինը: Մյուս խմբերի մասնաբաժինները կրճատվել են:

ՀՀ արտաքին առևտրաշրջանառության կառուցվածքն ըստ երկրների խմբերի, հունվար-հունիս, %



2018 թվականի հունվար-հունիսին՝ ինչպես և նախորդ երկու տարիներին, ՀՀ արտաքին առևտրաշրաշրջանառության գծով հիմնական գործընկեր երկրներ են հանդիսանում ԱՊՀ երկրներից՝ Ռուսաստանը, Ուկրաինան, Բելառուսը, ԵՄ երկրներից՝ Գերմանիան, Բուլղարիան, Իտալիան, ԱՅԼ երկրներից՝ Չինաստանն, Այլ երկրներ ենթախումբ՝ Շվեյցարիա, Վրաստան, Իրան, որոնց հետ առևտրաշրջանառությունը կազմում է արտաքին առևտրաշրջանառության 71.4%-ը:





Նախորդ երկու տարիների համեմատությամբ 2018 թվականի հաշվետու ժամանակահատվածում ՀՀ արտաքին առևտրաշրջանառության կառուցվածքում ավելացել է Չինաստանի, Շվեյցարիայի, ԱՄՆ հետ առևտրաշրջանառության մասնաբաժինը: Նվազել է Արաբական Միացյալ Էմիրությունների, Այլ երկրներ ենթախմբի, Իրանի և ԱՄՆ հետ առևտրաշրջանառության մասնաբաժինը:



Արտահանում

2018 թվականի հունվար-հունիսին աճել է արտահանումը բոլոր երկրների խմբերի գծով. ԱՊՀ երկրներ արտահանման աճը կազմել է 29.0%, ԵՄ երկրներ՝ 22.9% և Այլ երկրներ՝ 13.2%:

2018 թվականին ՀՀ արտահանման կառուցվածքում 2016 թվականի համեմատ ավելացել է դեպի ԱՊՀ երկրներ և ԵՄ երկրներ արտահանման մասնաբաժինը (համապատասխանաբար՝ 3.1 և 3.7 տոկոսային կետով), որին զուգահեռ 3.2 տոկոսային կետով ավելացել է դեպի ԵՏՄ երկրներ արտահանման մասնաբաժինը: Կրճատվել է դեպի ԱՅԼ երկրներ արտահանման մասնաբաժինը՝ 6.8 տոկոսային կետով:



ԱՊՀ երկրներ: Դեպի Ռուսաստան արտահանումն աճել է 27.5%-ով, դեպի Ղազախստան՝ 2.2 անգամ: Արտահանումը դեպի Բելառուս 2017 թվականի 27.0% նվազման դիմաց աճել է 50.9%-ով:

ԵՄ երկրներ: Այս խմբում հիմնական գործընկերներ հանդիսացող երկրներից արտահանումն աճել է դեպի Գերմանիա 21.2%-ով, Նիդեռլանդներ՝ 43.2%-ով, Բելգիա՝ 27.1% և Իտալիա՝ 5.8%: Դեպի այս խմբում երկրորդ հիմնական գործընկեր Բուլղարիա հանդիսացող արտահանումը նվազել է 4.4%-ով:

ԱՅԼ երկրներ: Հիմնական գործընկերներ հանդիսացող երկրներից արտահանումն աճել է դեպի Շվեյցարիա 48.2%%-ով, Չինաստան՝ 30.2%-ով, Արաբական Միացյալ Էմիրություններ՝ 8.3%-ով, Այլ երկրներ ենթախումբ՝ 25.3%-ով, Միացյալ Նահանգներ՝ 18.1%-ով և Իրան՝ 9.3%-ով: Նվազել է արտահանումը դեպի Վրաստան 56.0%-ով:

Ըստ ապրանքային բաժինների հանքահումքային արտադրանքի արտահանման աճը կազմել է 25.4%, պատրաստի սննդի արտադրանքինը՝ 7.4% և ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր՝ 27.6%, թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր՝ 13.1%-ով:

ՀՀ արտահանման կառուցվածքն ըստ ապրանքային բաժինների, %



«Մանածագործական իրեր» բաժնի արտահանման աճը կազմել է 59.0%, «վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտինը» աճել է 2.3 անգամ, «սարքեր և ապարատներ»՝ 26.2%), «բուսական ծագման արտադրանք»՝ 69.6%: Նվազել է «մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ» բաժնի արտահանումը 7.3%-ով (2018թ. կառուցվածքում մասնաբաժինը 1.9% է 2016թ. 1.0%-ի դիմաց):

Ներմուծում

2018 թվականի հունվար-հունիսին ներմուծման աճը կազմել է 33.9%: Ներմուծումն աճել է բոլոր երկրների խմբերի գծով. ԵՄ երկրներից՝ 59.0%-ով, Այլ երկրներից՝ 30.5%, ԱՊՀ երկրներից՝ 23.3%-ով: Նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի բարձր աճի տեմպերը՝ 2018թ. առաջին կիսամյակում ներմուծման աճի տեմպերը արագացել են բոլոր երկրների խմբերի պարագայում:

Ներմուծման կառուցվածքում ավելացել է ԵՄ երկրներից ներմուծման մասնաբաժինը. 2016թ. նկատմամբ՝ 1.3 տոկոսային կետով, 2017թ.՝ 3.9 տոկոսային կետով:

ԱՊՀ երկրներ: Ռուսաստանի Դաշնությունից ներմուծումը աճել է 18.5%-ով, Բելառուսից՝ 19.6%-ով, Ղազախստանից՝ 2.2 անգամ: Այս խմբում կառուցվածքում երկրորդ խոշոր մասնաբաժինն ունեցող Ուկրաինայից ներմուծման աճը կազմել է 57.8%:

ԵՄ երկրներ: Այս խմբում հիմնական գործընկերներ հանդիսացող երկրներից ներմուծման աճ է արձանագրվել Միացյալ Թագավորությունից՝ 3.4 անգամ, Ֆրանսիայից՝ 2.2 անգամ, Գերմանիայից ՝ 81.4% և Նիդեռլանդներից՝ 61.8%-ով Այս խմբում հիմնական գործընկերներ հանդիսացող Բելգիայից ներմուծումը նվազել է 1.3%-ով:



ԱՅԼ երկրներ: Նախորդ տարվա հիմնական գործընկեր երկրներից ներմուծման բարձր աճի տեմպի միտումները պահպանվել են նաև այս տարի: Այս խմբում ներմուծումն աճել է հիմնական գործընկերներ հանդիսացող երկրների գծով Արաբական Միացյալ Էմիրություններից՝ 8.5%-ով, Իրանից՝ 38.8%-ով, Չինաստանից՝ 53.9%-ով, Այլ երկրներ ենթախմբից՝ 58.4%-ով, Շվեյցարիայից՝ 59.4%-ով և Միացյալ Նահանգներից՝ 2.3 անգամ: Ներմուծումը նվազել է Վրաստանից՝ 6.7%-ով և Թուրքիայից՝ 0.1%-ով:

Ըստ ապրանքային բաժինների աճ է արձանագրվել բոլոր բաժինների գծով, բացառությամբ «քիմիայի և դրա հետ կապված արդյունաբերություն» բաժնից:



Ներմուծման աճ է գրանցվել «հանքահումքային արտադրանք» բաժնում 6.8%-ով (մասնաբաժինը 14.0% է 2016թ.՝ 18.7%-ի և 2017թ.՝ 17.6%-ի դիմաց), «մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմների» գծով աճը կազմել է 81.2% (մասնաբաժինը 18.6%), «պատրաստի սննդի արտադրանք»՝ 19.4% (մասնաբաժինը 7.9%), «ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր»՝ 40.5% (մասնաբաժինը 7.3%), «մանածագործական իրեր»՝ 35.4% (2018թ. կառուցվածքում մասնաբաժինը 6.1% է 2016թ.՝ 6.4%-ի դիմաց), «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր»՝ 27.0% (2018թ. կառուցվածքում մասնաբաժինը 5.8% է 2016թ.՝ 4.8%-ի և 2017թ.՝ 6.1%-ի դիմաց): Ներմուծումը նվազել է «քիմիայի և դրա հետ կապված արդյունաբերության ճյուղերի արտադրանքի» գծով 6.7%-ով (2018թ. կառուցվածքում մասնաբաժինը 8.8% է 2016թ.՝ 11.0%-ի և 2017թ.՝ 12.6%-ի դիմաց):

Համաշխարհային առևտրին ՀՀ ինտեգրման մակարդակն ունի աճի միտում: 2017թ. ՀՀ բացվածության ցուցանիշը կազմել է 54.8%, ինչը 6.8 տոկոսային կետով գերազանցում է 2016 թվականի ցուցանիշը:



2005 թվականից ի վեր բացվածության ցուցանիշը Հայաստանում ամենաբարձր մակարդակին հասել է 2017 թվականին՝ 54.8%, իսկ ամենացածր մակարդակին՝ 2012 թվականին (բացվածության ցուցանիշը կազմել է 44.2%):

Ըստ ՀՆԱ օգտագործման եղանակով հրապարակված ցուցանիշների արտահանում/ՀՆԱ ցուցանիշը 2014-2017 թվականներին ավելացման միտում է դրսևորել:





Արտահանում/ՀՆԱ ցուցանիշի առավելագույն մեծություն գրանցվել է 2017 թվականին՝ 37.3%, իսկ նվազագույն՝ 2008 թվականին՝ 15.0%: Ներմուծում/ՀՆԱ ցուցանիշի առավելագույն մեծություն գրանցվել է 2005 թվականին՝ 50.5%, իսկ ամենացածրը՝ 2007 թվականին՝ 39.2%, իսկ 2017 թվականին կազմել է 48.0%:

7. ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ

Տնտեսության իրական հատվածում 2018 թվականի առաջին կիսամյակում նախորդ տարվա նույն կիսամյակի համեմատ օտարերկրյա ներդրումների ներհոսքն աճել է, իսկ ուղղակի ներդրումների ներհոսքը՝ նվազել:

Իրական հատվածում կատարված օտարերկրյա ներդրումների համախառն ներհոսքը կազմել է 1158.6 մլն ԱՄՆ դոլար, աճը՝ 12.7%, որից ուղղակի ներդրումների ներհոսքը կազմել է 261.4 մլն ԱՄՆ դոլար, նվազումը՝ 20.4%:



Օտարեկրյա ներդրումների զուտ հոսքերի ծավալը

2018 թվականի կիսամյակում ընդհանուր ներդրումների զուտ հոսքը կազմել է -25.6 մլրդ դրամ, որից ուղղակի ներդրումների զուտ հոսքը՝ 39.1 մլրդ դրամ (2017 թվականին համապատասխանաբար՝ -26.2 և 15,8 մլրդ դրամ): Բացարձակ փոփոխությունները կազմել են համապատասխանաբար 0.6 և 23.5 մլրդ դրամ:

Ըստ գործունեության տեսակների՝ ընդամենը ներդրումների զուտ հոսքերը հիմնականում ուղղվել են՝ հանքագործական արդյունաբերության հարակից գործունեություն (20.9 մլրդ դրամ, որից ուղղակի ներդրումներ՝ 20.6 մլրդ դրամ, երկիրը՝ Ջերսի, Իռլանդիա, Ռուսաստան), հիմնային մետաղների արտադրություն (4.7 մլրդ դրամ, որից ուղղակի ներդրումներ՝ 3.8 մլրդ դրամ, երկրները՝ Միացյալ Թագավորություն, Ռուսաստան, Գերմանիա), ծխախոտային արտադրատեսակների արտադրություն (4.5 մլրդ դրամ, երկիրը՝ Կանադա), մանրածախ առևտուր, բացի ավտոմեքենաների և մոտոցիկլների առևտրից (1.2 մլրդ դրամ, որից ուղղակի ներդրումներ՝ 1.2 մլրդ դրամ, երկրները՝ Արաբական Միացյալ Էմիրություններ, Ռուսաստան), մեծածախ առևտուր, բացի ավտոմեքենաներից և և մոտոցիկլների առևտրից (3,2 մլրդ դրամ, որից ուղղակի ներդրումներ՝ 1,6 մլրդ դրամ, երկիրը՝ Ռուսաստան) և այլն:

8. ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ

2018թ. 1-ին կիսամյակում ինչպես միջազգային, այնպես էլ ներքին զբոսաշրջության աճը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի ցուցանիշի համեմատ դանդաղել է: 2018 թվականի 2-րդ եռամսյակում նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ գրանցվել է ժամանողների թվաքանակի աճ:

2018 թվականի 1-ին կիսամյակում հանրապետություն են ժամանել 685 հազար 971 զբոսաշրջիկ, աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ կազմել է 10.2%: 2018 թվականի 2-րդ եռամսյակում ժամանողների թվաքանակն աճել է 4.8%-ով:





Զբոսաշրջության նպատակով հանրապետությունից մեկնել է 610 հազար 950 մարդ, աճը կազմել է 13.0%-ով: Ներքին զբոսաշրջության ցուցանիշն աճել է 17.1%-ով (158 հազար 756 զբոսաշրջիկ), 2017 թվականի առաջին կիսամյակի 21.0% աճի դիմաց:

Ըստ ՀՀ այցելած զբոսաշրջիկների աշխարհագրական բաշխվածության ՀՀ այցելած զբոսաշրջիկների 27.1%-ը բաժին է ընկնում ԱՊՀ երկրներին (աճը՝ 17.4%), ԵՄ երկրներին՝ 24.0%-ը՝ (աճը՝ 43.3%) և 48.9%-ն այլ երկրների խմբին (աճը՝ 8.1%):

Ըստ այցելության նպատակի՝ ժամանողների 52,5%-ը հանրապետություն են ժամանել հանգստի և ժամանցի նպատակով (աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ կազմել է 8.5%), 22.9%-ը՝ գործնական (աճը՝ 22.8%), 23.1%-ը՝ այլ նպատակներով (աճը՝ 29.2%) և 1.5%-ը բուժման նպատակով (աճը՝ 10.7անգամ):

Մեկնողների 98.0%-ը մեկնել է հանրապետությունից հանգստի և ժամանցի նպատակով (աճը՝ 3.3%), և 2.0%-ը՝ գործնական (նվազումը -60.7%): Բուժման, կրթության և այլ նպատակներով մեկնումներ չեն գրանցվել:

Ներքին զբոսաշրջության կառուցվածքում 66.2%-ը բաժին է ընկել հանգստի և ժամանցի նպատակով այցելություններին (աճը՝ 25.6%), 26.3%-ը՝ գործնական նպատակով (աճը՝ 36.4%), 4.2%-ը՝ այլ նպատակով (նվազումը՝ -39.1%) և 3.3%-ը՝ բուժման նպատակով (նվազումը -11.8%):